

**Արտակարգ դրության իրավիճակը Հայաստանում
կորոնավիրուսային վարակի պայմաններում**

Մարտուն Վիրաբյան

Հանգուցային բառեր. *կառավարության որոշումներ, իրավունք, պարտականություն, անմիջական վտանգ, օրենքի խախտում, սահմանադրություն, ռեժիմ, վտանգ*

Նախաբան

ՀՀ կառավարությունը, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, ՀՀ ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից՝ ժամը 18:30-ից, հայտարարել էր արտակարգ դրություն, որը շարունակվեց մինչև սեպտեմբերի 11-ը: Արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշման ընդունումից հետո, իրավունքի ուժով հայտարարվել էր ՀՀ Ազգային ժողովի նիստ:

Հայաստանում արտակարգ դրության ռեժիմ է սահմանվում բացառապես ՀՀ *Սահմանադրության* և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

ՀՀ Սահմանադրության 120-րդ հոդվածն ասում է.

1. Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում ՀՀ կառավարությունը հայտարարում է արտակարգ դրություն, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին,

2. Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստ,

3. ՀՀ Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը,

4. Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ¹:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին:

Համաձայն «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի՝ արտակարգ դրությունը հայտարարվում է միայն ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկչական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը, արտակարգ իրավիճակները: Այն հայտարարվում է միայն այն դեպքերում, երբ ՀՀ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի վերացումն առանց դրա անհնարին է²:

ՀՀ Սահմանադրության 208-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում, որի հետևանքով ապրիլի 5-ին նախատեսված *Հայաստանի սահմանադրական հանրաքվեն* չկայացավ:

Արտակարգ դրություն հայտարարելուն նախորդեցին մի շարք գործողություններ.

1. Փետրվարի 23-ին փակվեց հայ-իրանական սահմանը³:
2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ մարտի 14-ին 10 օրով փակվել է հայ-վրացական սահմանը⁴:
3. Մարտի 15-ին՝ ժամը 23:00-ից, սահմանափակվել է Էջմիածին քաղաքի մուտքն ու ելքը: Քաղաքի 27 մուտքերից 24-ը փակվել են, իսկ 3 մուտքերում իրականացվում է ելումուտի հատուկ հսկողություն⁵:

Խնդրի արձաձումը տարբեր փաստաթղթերում

Ողջ Հայաստանում արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումը ՀՀ կառավարությունը կայացրել է մարտի 16-ին մեկամսյա ժամկետով: Որոշմամբ սահմանվում էր, որ «Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին, 12.04.2012:

³ Տե՛ս <https://armeniasputnik.am/armenia/20200223/22155891/hay-iranakan-sahmany-kpakvi.html>:

⁴ Տե՛ս <https://www.lragir.am/2020/03/13/526633/>:

⁵ Տե՛ս <https://www.1lurer.am/hy/2020/03/15/>:

սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը՝ ժամը 17:00-ը ներառյալ, հայտարարվում է արտակարգ դրություն:

Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծել պարետատուն (այսուհետ՝ Պարետատուն): Պարետատան ղեկավարման համար պարետ նշանակել փոխվարչապետ Տիգրան Ավինյանին (այսուհետ՝ Պարետ):

Պարետատան կազմում ի պաշտոնն ընդգրկվում են ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ արտակարգ իրավիճակների, առողջապահության, էկոնոմիկայի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարները, Պետական եկամուտների կոմիտեի ղեկավարը, ՀՀ ոստիկանության պետը, Ազգային անվտանգության ծառայության տնօրենը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի ղեկավարը, ՀՀ առողջապահական և աշխատանքի ու ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինների ղեկավարները»⁶:

Արտակարգ դրության պայմաններում ՀՀ ողջ տարածքում արգելվում է հանրային միջոցառումների կազմակերպումը, անցկացումը և դրանց մասնակցությունը, արգելվում են բոլոր ուսումնական հաստատությունների ոչ հեռավար աշխատանքները:

Արտակարգ դրության պայմաններում արգելվում է կորոնավիրուսով վարակակիրների մասին որևէ տեղեկատվություն կամ դեպք քննարկել հանրացանցերում կամ լրատվամիջոցներում՝ բացառությամբ պաշտոնականի:

Հաջորդ օրը՝ մարտի 17-ի երեկոյան, ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնեց երկրում COVID-19 տեսակի կորոնավիրուսով վարակվածների թվի մասին (78 մարդ) և Երևանի Ինֆեկցիոն հիվանդանոցի մոդուլային ընդունարանի շինարարության մեկնարկի մասին, որի շնորհիվ 3-4 օր հետո հիվանդանոցը կունենա 40 նոր հիվանդասենյակ⁷:

Մարտի 20-ին վարակվածների թիվն արդեն 136 էր, որից 4-ը՝ թոքաբորբով հիվանդներ⁸: Երեկոյան ՀՀ Ազգային ժողովը ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարեց, ըստ որի՝ արտակարգ դրության

⁶ Տե՛ս <https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/>:

⁷ Տե՛ս <https://www.tert.am/am/news/2020/03/18/norq/3239147>:

⁸ Տե՛ս <https://www.azatutyun.am/a/30500005.html>:

ժամանակ մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջներ խախտելը կպատժվի 300-500 հազար դրամ տուգանքով կամ կպատժվի մինչև 3 ամիս կալանքով կամ մինչև 5 տարի ազատազրկմամբ՝ կախված հետևանքներից:⁹

Մարտի 24-ին պարետատունը մեկշաբաթյա խստացված ռեժիմի որոշում է կայացրել, որով սահմափակվել է մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքը, և սահմանվել է անձանց պարտադիր ինքնամեկուսացում:¹⁰

Պարետի որոշման մեջ նշվում էր.

«Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ՝ մինչև 2020 թվականի մարտի 31-ը՝ ժամը 23:59-ը՝

1. ՀՀ ամբողջ տարածքում սահմանափակել մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքը և սահմանել անձանց պարտադիր ինքնամեկուսացում իրենց մշտական բնակության կամ իրենց նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի հնարավոր տարածումը կանխելու նպատակով.

2. Սահմանել սույն որոշման 1-ին կետի պահանջի հետևյալ բացառությունները՝

1) Պարետի՝ 2020 թվականի մարտի 24-ի N 14 չարգելված տնտեսական գործունեության տեսակների տնտեսվարող սուբյեկտների աշխատակիցների և Պարետի՝ 2020 թվականի մարտի 24-ի N 15 որոշմամբ սահմանված կարգով աշխատավայրում գտնվելու իրավունք ունեցող անձանց աշխատանքի վայր մեկնելը և վերադառնալը՝ սույն որոշման հավելվածով սահմանված տեղեկությունները պարունակող գրության և անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում.

2) 2004 թվականի նոյեմբերի 24-ի «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՕ-134-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված առևտրի իրականացման վայրերում և դրանցից դուրս գործող՝ պարենային ապրանքների վաճառք իրականացնող առևտրի օբյեկտներ, դեղատներ, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ, հիվանդանոցներ ու բժշկական այլ հաստատություններ, խնամքի կարիք ունեցող անձանց

⁹ Տե՛ս <https://www.panarmenian.net/arm/news/279288/>:

¹⁰ Տե՛ս <https://a1plus.am/hy/article/363168>:

բնակության կամ կացության վայր, հոգեհանգստի և հուղարկավորության վայր այցելությունների՝ սույն որոշման հավելվածով սահմանված տեղեկությունները պարունակող գրության և անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում.

3) Բնակության վայրի մոտակայքում օրվա ընթացքում միայն մեկ անգամ ֆիզիկական վարժություններ կամ հեծանվավարություն իրականացնելու նպատակով՝ սույն որոշման հավելվածով սահմանված ձևաչափով լրացված թղթի և անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում.

3. Սույն որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված դեպքերում թույլատրվում է անձնական տրանսպորտային միջոցներով առավելագույնը երկու անձանց (ներառյալ վարորդը) տեղափոխումը.

4. ՀՀ ոստիկանության պետ Արման Սարգսյանին ապահովել սույն որոշման պահանջների իրականացումը:

ՀՀ ոստիկանությանը վերապահել սույն որոշման 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթի և գրության առկայության ստուգումը.

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 24-ին՝ ժամը 23:59-ին»:

Մարտի 31-ին վարչապետը հանդես է եկել հատուկ խստացված ռեժիմը ևս 10 օրով երկարացնելու մասին հայտարարությամբ¹¹:

Մարտի 31-ին հատուկ ռեժիմը երկարաձգվեց ևս 12 օրով: Արգելվեց հանրային տրանսպորտի գործունեությունը և փակվեց Երևանի մետրոպոլիտենը:

Ապրիլի 12-ին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը ուղերձով դիմում է հանրապետության քաղաքացիներին և տեղեկացնում, որ ստորագրել է հրամանագիր Արցախի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման և կորոնավիրուսի համաճարակի սպառնալիքից բնակչության պաշտպանության նպատակով Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին: Ուղերձում մասնավորապես նշվում էր, որ «Հաշվի առնելով, որ, չնայած նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման և կորոնավիրուսի համաճարակի սպառնալիքից բնակչության պաշտպանության ուղղությամբ ձեռ-

¹¹ Տե՛ս <https://www.aysor.am/am/news/2020/03/31/>:

նարկված միջոցառումների արդյունքում տևական ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում վարակի դեպքեր չէին արձանագրվել, սակայն վերջերս վարակի արձանագրված դեպքերը անհրաժեշտություն են առաջացրել նոր լրացուցիչ քայլերի ձեռնարկման և միջոցառումների իրականացման, այդ թվում՝ ապրիլի 14-ին նախագահական ընտրությունների անցկացման ժամանակ»¹²:

Ապրիլի 13-ին ՀՀ կառավարության հրավիրված արտահերթ նիստում ընդունվեց հանրապետությունում արտակարգ դրության ռեժիմը 30 օրով երկարաձգելու որոշում: Այն կտևի մինչև 2020 թվականի մայիսի 14-ը՝ ժամը 17:00-ը ներառյալ:

Որոշման մեջ ասվում էր՝ երկարացման պատճառն այն է, որ 2020 թ. մարտի 16-ին արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները երկրում դեռևս չեն վերացել: «Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակը շարունակում է սպառնալ բնակչության կյանքին և առողջությանը և կարող է հանգեցնել անձանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման»,– շեշտված էր որոշման մեջ¹³:

Արտակարգ դրության պարետ, փոխվարչապետ Տիգրան Ավինյանը մայիսի 3-ին որոշում է ստորագրում, որի համաձայն՝ մայիսի 4-ից փոփոխություններ են տեղի ունենալու արտակարգ դրության ընթացքում կիրառվող սահմանափակումներում:

Որոշման 6-րդ հավելվածով սահմանվում են մեծածախ և մանրածախ առևտրի օբյեկտների գործունեության ընթացքում կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) տարածման կանխարգելման անվտանգության կանոնները:

Մեծածախ և մանրածախ առևտրի օբյեկտների տարածքում առողջ և անվտանգ պայմանների ապահովման պարտականությունը ողջ ծավալով կրում է ընկերությունը՝ պահպանելով սույն հավելվածով սահմանված կանոնները¹⁴:

¹² Տե՛ս <https://168.am/2020/04/12/1288226.html>:

¹³ Տե՛ս <https://www.e-gov.am/gov-decrees/item/33807/>:

¹⁴ Տե՛ս <https://iravaban.net/270673.html>:

Մայիսի 14-ին կառավարությունը կրկին երկարաձգել է արտակարգ դրության ռեժիմը մինչև 2020 թվականի հունիսի 13-ը՝ ժամը 17:00-ը ներառյալ¹⁵:

Մայիսի 18-ից վերականգնվել են հասարակական տրանսպորտի, մարզադահլիճների, մանկապարտեզների և հանրային սննդի կետերը:

Պարետ Տիգրան Ավինյանը մայիսի 21-ին նոր որոշում է ստորագրում, որով փոփոխություններ են կատարվել մարտի 18-ի որոշման մեջ: Նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ինքնամեկուսացման պահանջ է սահմանվում արտերկրից ՀՀ ժամանող անձանց, ինչպես նաև COVID-19 վարակակիր անձի հետ համատեղ ապրող անձանց կամ նրա հետ սերտ շփում ունեցած կոնտակտավորների (այսուհետ՝ կոնտակտավորներ) համար¹⁶:

Պարետ Տիգրան Ավինյանը մայիսի 25-ին նոր որոշում է ստորագրում՝ կապված դիմակների կրման հետ: Մասնավորապես սահմանվում է, որ ՀՀ տարածքում պարտադիր է հանրային բաց վայրերում դիմակի առկայությունը, որը պարտադիր է նաև անձնական օգտագործման մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներում, եթե վարորդից բացի՝ մեքենայում առկա է առնվազն մեկ ուղևոր¹⁷:

Հունիսի 12-ին ՀՀ կառավարությունը, թագավարակի դեմ պայքարի անհրաժեշտությամբ պայմանավորված, Հայաստանում արտակարգ դրություն հայտարարելու արդեն 4-րդ որոշումը կայացրեց: Այսպիսով՝ մարտի 16-ից Հայաստանի Հանրապետությունում գործող արտակարգ դրությունը երկարացվեց 3-րդ անգամ¹⁸: Այն հանրության կողմից ընկալվեց ոչ միանշանակ: «Եթե վերցնում ենք արտակարգ դրության ռեժիմի սահմանման նախնական տարբերակները,– նշում է քաղաքագետ Կնյազ Սարոյանը,– ապա տեսնում ենք, որ այնտեղ կային հանրային կյանքի մի շարք ոլորտների նկատմամբ սահմանափակումներ, այդ թվում՝ մարդու իրավունքների իրացման հետ կապված: Բայց, եթե մենք վերցնում ենք արդեն վերջին տարբերակը, որն ընդունվեց ու համադրում ենք նախորդների հետ, տեսնում ենք, որ նախկինում գործող բոլոր սահմանափակումները հանվել են, ու վերջնական տարբերակում կա միայն խաղաղ

¹⁵ Տե՛ս <https://www.e-gov.am/gov-decrees/item/33994/>:

¹⁶ Տե՛ս <https://ipress.am/hy/page/>:

¹⁷ Տե՛ս <https://a1plus.am/hy/article/376464>:

¹⁸ Տե՛ս <https://www.e-gov.am/gov-decrees/item/34188/>:

հավաքների, պիկետների, ցույցերի անցկացման սահմանափակումը:» Նրա խոսքով՝ տպավորություն է ստեղծվում, որ Հայաստանում համաճարակի տարածմանն ու խորացմանը նպաստում են միայն հավաքները: Այս տեսակետից, ըստ քաղաքագետի, հարցն ավելի շատ քաղաքական նպատակադրումների տիրություն է, քան զուտ համավարակի դեմ տարվող գործողությունների¹⁹:

Հուլիսի 13-ին Հայաստանում արտակարգ դրության ռեժիմը երկարացվեց ևս մեկ ամսով: Որոշումը կայացվեց ՀՀ կառավարության նույն օրվա նիստում: Արտակարգ դրությունը երկարաձգվեց մինչև 2020 թ. օգոստոսի 12-ը՝ ժամը 17:00-ը²⁰: ՀՀ վարչապետը հուլիսի 13-ին ավարտվող արտակարգ դրության երկարաձգման մասին հայտարարել էր դեռ հուլիսի 6-ին: Նա նշել էր, որ այդ ընթացքում ՀՀ կառավարությունը կփորձի կատարելագործել նաև արտակարգ դրության մասին օրենսդրությունը այնպես, որ արտակարգ դրության ռեժիմը վերացնելուց հետո կառավարությունը հակահամաճարակային քաղաքականություն վարելու որոշակի գործիքներ ունենա²¹:

Արտակարգ դրության ժամկետը ՀՀ կառավարության որոշմամբ օգոստոսի 12-ից երկարաձգվեց ևս մեկ ամսով²²: Պարետատան նիստից հետո կայացած ձեպագրույցին ՀՀ փոխվարչապետ, պարետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ չնայած որոշում է կայացվել արտակարգ դրության ռեժիմը ևս մեկ ամսով երկարաձգելու, բայց նաև էական փոփոխություններ են լինելու՝ արտակարգ դրության ռեժիմում սահմանված որոշակի արգելքների հետ կապված: Նա նշեց, թե վերանայվելու են օտարերկրյա քաղաքացիների մուտքի հնարավորությունների, ապրանքների արտահանման որոշակի սահմանափակումների, հանրահավաքներ անցկացնելու, հանրային միջոցառումների հարցերը: «Այս բոլոր հարցերի փաթեթն, իհարկե, կախված է համաճարակային վիճակից և բարելավվող տենդենցի պահպանումից, որը միանշանակ կախված է մեր վարքագծից», -ասաց նա: Ըստ Ավինյանի՝ սահմանված կանոնների պահպանումը թույլ կտա վերանայել այն բոլոր սահմանափակումները, որոնք առկա են

¹⁹ Տե՛ս <https://armeniasputnik.am/armenia/20200613/23369868/>:

²⁰ Տե՛ս <https://www.e-gov.am/gov-decrees/item/34414/>:

²¹ Տե՛ս <https://armeniasputnik.am/armenia/20200713/23706800/>:

²² Տե՛ս <https://www.e-gov.am/gov-decrees/item/34569/>:

արտակարգ դրության ռեժիմով սահմանված ՀՀ կառավարության որոշման նախագծում²³:

Սեպտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովն արտահերթ նստաշրջանում 70 կողմ, 19 դեմ և 0 ձեռնպահ ձայներով երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց ՀՀ կառավարության ներկայացրած արտակարգ դրությունը կարանտինային ռեժիմով փոխարինելուն վերաբերող նախագծերի փաթեթը: Նշենք, որ նախագծի ներկայացման ժամանակ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ՀՀ Ազգային ժողովում հայտարարեց, որ սեպտեմբերի 12-ից հետո Հայաստանում հայտարարված արտակարգ դրությունը կփոխարինվի կարանտինով: Կառավարության հեղինակած օրենսդրական փաթեթով նախատեսվում է կարանտինային գոտում կիրառել մուտքի ու ելքի սահմանափակումներ՝ ընդհուպ պետական սահմանի փակում, տվյալ տարածքից ապրանքների ներմուծման ու արտահանման սահմանափակումներ, ինչպես նաև կրթական հաստատությունների փակում: Տնտեսական գործունեությունը կարող է սահմանափակվել միայն այն դեպքերում, երբ այդ ձեռնարկությունները լինեն համաճարակի աղբյուր:

Եզրակացություն

Այսպիսով՝ ավարտվեց կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարի առաջին շրջափուլը, սակայն սեպտեմբերի 27-ին բռնկվեց Արցախյան երրորդ պատերազմը, որը փոխեց հանրապետության ողջ իրավիճակը, և որի ընթացքում բռնկվեց կորոնավիրուսի համավարակի նոր, ծանրագույն փուլ:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին:
2. Հայաստանի Հանրապետության օրենքը «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին», 12.04.2012:
3. <https://armeniasputnik.am/armenia/20200223/22155891/hay-iranakan-sahmany-kpakvi.html>.
4. <https://www.panarmenian.net/arm/news/279288/>.
5. <https://iravaban.net/270673.html>.

²³ Տե՛ս <https://www.tert.am/am/news/2020/08/05/Gov/3362845>:

Чрезвычайное положение в Армении в условиях коронавирусной инфекции

Мартун Вирабян

Резюме

Ключевые слова: решения правительства, права, обязанности, непосредственная опасность, нарушение закона, конституция, режим, опасность

В этой статье мы постарались представить борьбу с коронавирусом в Армении в чрезвычайных ситуациях. После того, как было принято решение об объявлении чрезвычайного положения, было создано заседание Национального собрания РА по силе закона. Изучая различные документы, имеющие юридическую силу, мы приходим к выводу, что в случае неминуемой угрозы конституционному порядку, правительство объявляет чрезвычайное положение, принимает меры по урегулированию ситуации, обращается к населению, правовому режиму чрезвычайного положения, устанавливается законом, который принимается большинством голосов от общего числа депутатов.

Установлен комендантский час для совместного руководства силами, обеспечивающими правовой режим чрезвычайного положения, в состав которых входят различные министерства, комитеты и органы управления.

В этой статье мы также рассказали об ограничениях, которые были введены в отношении людей, инфицированных коронавирусом, во время ЧП. Закон вступил в силу после принятия решения о том, что они будут наказаны, если какая-либо информация будет обсуждаться в социальных сетях или в СМИ, признавая исключительно официальную информацию.

В работе представлены права, которыми может пользоваться население при посещении очень необходимых мест (наличие маски, наличие записки с соответствующей информацией, документа, удостоверяющего личность и т.д.).

State of Emergency in Armenia under Conditions of Coronavirus Infection

Martun Virabyan

Summary

Key words: *government decisions, rights, responsibilities, imminent danger, violation of law, constitution, regime, danger.*

In this article we have tried to present the fight against coronavirus in Armenia in emergency situations. After the decision of declaring a state of emergency was made, a sitting of the National Assembly was announced by the force of law. Studying various documents with legal force, we come to the conclusion that in case of imminent threat to the constitutional order, the government declares a state of emergency, takes measures to address the situation, addresses the people, the legal regime of the state of emergency established by law, which is adopted by a majority vote of the total number of deputies.

A curfew has been set up for the joint management of the forces, ensuring the legal regime of the state of emergency, which includes various ministries, committees and governing bodies.

In this article, we also presented the restrictions that were imposed on people infected with the coronavirus during the state of emergency. The law came into force on the decision that they will be punished if any information is discussed on social networks or in the media, accepting exclusively official information.

The work presents the rights of the population in case of visiting very necessary places (the presence of a mask, the presence of a note containing the relevant information, an identity document, etc.).

Ներկայացվել է 02.10.2021 թ.

Գրախոսվել է 10.10.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.